ԱԶԳԱՅԻՆ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՇՄԱԼԵԱՆՑ

Մայր Աթոռոյս Տաճարի Աւագ սեղանոյն ծիրանեգոյն թաւշեայ կերպաս մի փոքրագիր (վասն գործածութեան ի ժամանակի Տէր ողորմեայի) պատուական վարագոյր ընծայեց բարեպաշտուհի և Առաքինասէր այրի Տիկին Մարիամ Գ. Թուշմալեանց՝ ի յիշատակ սիրելւոյ որդւոյ իւրոյ հանգուցելոյ Պետրոսբէկի Գ. Թուշմալեանց:

Յիշեալ Ազնիւ Տիկնոջ — ինչպէս և հանգուցեալ բարեյիշատակ կողակցին — բարեգործութիւնք և բարեբարութիւնք բազմածանօթ են, որոց մի ապացոյց ևս յաւելուած է սոյն նուէրը, որոյ վասն հրապարակաւ խորին շնորհակալութիւն կը մատուցանեմք առաքինասէր Տիկնոջ, միանգամայն կը դրուատեմք նորին եկեղեցասէր և ուսումնասէր եռանդը և համակրութիւնը մանաւանդ յատկապէս Ս. Էջմիածնի Տաճարիս պայծառութեան համար, և մեծայոյս կըղձամք յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ առաւելապէս իմն փառաւոր նորին մի սխրագործութեան հանդէսը ընդփոյթ աւետել մերազնէից:

ՇՈՒՐՋԱՌ

Նմանապէս ջանիւք Գեր. Առաջնորդին Աստրախանայ Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոսի Վեհապետեանց՝ Աստրախանաբնակ մերազնեաներէն Մեծապատիւ Պօղոս Գ. Խաչիկեանց մի Շուրջառ նուիրեց Մայր Աթոռոյս ի վայելս Միաբանութեանս Ս. Ուխտի: Վասն որոյ պարտ կը համարիմք մեր շնորհակալութիւն տալ յիշեալ առաքինասէր առն Գ. Պօղոսի Խաչիկեանց:

ՄՇԱԿ

Ներկայ տարւոյս սկիզբէն սկսաւ հրատարակուիլ ի Տփխիս Մշակ անուն Գրականական և Քաղաքական մի նոր շաբաթաթերթ, որոյ Խմբագիր-հրատարակողն է Գ. Գ. Գրիգոր Արծրունի, և տարեկան գինն 7 ռուբլի՝ սուրհանդակի ծախքով:

Լրագրաց յաճախութիւնք թէև որ և իցէ ազգի զարգացման և յառաջադիմութեան գրաւականներ են, բայց դժբաղդաբար մեր ազգի նկատմամբ բազմիցս գիսաւոր աստեղաց երևոյթներու նմանութիւնն ունեցած են, որոց գլխաւոր պատճառ որչափ ժողովուրդք՝ այնքան գուցէ առաւել ևս՝ խմբագրաց ապիկարութեան կամ անհեռատեսութեան և կամ անակնկալ ինչ ինչ դիպուածոց կվերաբերին: Ի վերայ այսր ամենայնի մեք մեծայոյս եմք Գ. Արծրունւոյ վերայ. քանզի Մշակի ցարդ հրատարակեալ մի քանի թերթից պարունակութիւնք կապացուցանեն՝ որ օգտաւէտ և արդիւնաւոր կարող է լինել Ազգիս համար, ուստի կը շնորհաւորեմք նորա լրագրական ասպարիզին մուտքը, և կը բարեմաղթեմք կարողութիւն՝ յաջողութիւն և անսայթաք յարատեւութիւն՝ նաև իւր միշտ նախամեծար համարելոյ զօգուտն Ազգի և Եկեղեցւոյ մերոյ: